ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №2

«23» փետրվարի 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «18» «06» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. «COP17 բրենդային նվերների մշակում և արտադրություն» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) փուլային նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. «COP17 բրենդային նվերների մշակում և արտադրություն» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) փուլային նկարագրով» ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №3-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայանագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված, Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.4 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.6. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.7. Համաձայնագրի Հավելված №3-ի «Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Նշված գումարի չօգտագործված մասը ենթակա է վերադարձման Պատվիրատուին: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում:

2.8. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.9. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու օրը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №2
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության													
հ/հ	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**										
			հունվար	**փետրվար**	**մարտ**	**ապրիլ**	**մայիս**	**հունիս**	**հուլիս**	**օգոստոս**	**սեպտեմբեր**	**հոկտեմբեր**	**Ընդամենը**
1	79951112	COP17 բրենդային նվերների մշակում և արտադրություն	-	-	-	-	-	260 737 773	260 737 773	260 737 773	289 544 440	289 544 440	**289 544 440**

Հավելված №2
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №2
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով: Միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում:

COP17 բրենդային նվերների մշակում և արտադրություն

Նպատակ

Մատուցման ենթակա փուլային ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «բրենդինգի և ցուցանակների պատրաստում հանդիպման անցկացման ողջ տարածքում» պարբերությամբ սահմանված պահանջների կատարման նպատակով:

COP17 հաղորդակցման ռազմավարության շրջանակում նախատեսվում է բրենդային նվերների մշակումը և արտադրությունը՝ պատվիրակների համար՝ համաձայն ՄԱԿ-ի գործընկերների կողմից սահմանված ուղեցույցների և միջազգային միջոցառումների փորձի:

Սույն նախագիծը հանդիսանում է COP17 հաղորդակցման և առաջխաղացման միասնական ռազմավարության բաղադրիչ և իրականացվում է դրա շրջանակում՝ որպես բարձր տեսանելիություն և գործառնական արդյունավետություն ապահովող հաղորդակցման գործիք:

Նախագծի նպատակն է ձևավորել բարձրորակ, գործառնական և բրենդային արժեք կրող նյութերի փաթեթ, որը միաժամանակ ապահովում է՝

- COP17 բրենդի տեսանելիություն և ճանաչելիություն
- միասնական և պրոֆեսիոնալ ներկայացվածություն միջոցառման ընթացքում
- երկարաժամկետ օգտագործման ենթակա բրենդային կրիչների ստեղծում
- էկոլոգիական և պատասխանատու սպառման արժեքների փոխանցում

1. **Պարտադիր բաղադրիչներ**
Ծառայության շրջանակում նախատեսվում է բրենդային նվերների փաթեթի մշակում և արտադրություն, որը ներառում է՝

- **Կրծքանշան (Pin) 18.550 հատ**

  մետաղական կրծքանշան՝ COP17 լոգոյի հիման վրա մշակված էմբլեմայի ձևով
  • հիմնական տարբերակ՝ 17,000 հատ (լոգոյի գույներով)
  • հատուկ տարբերակներ (նախատեսված բարձր մակարդակի պատվիրակների համար)՝
  - 700 հատ կապույտ
  - 400 հատ կարմիր
  - 450 հատ ոսկեգույն (նախատեսված բարձր մակարդակի պատվիրակների համար, ամբողջությամբ մետաղական)

- հատուկ փաթեթավորում՝ նախատեսված բարձր մակարդակի պատվիրակներին հանձնվող ոսկեգույն կրծքանշանների համար՝ 400 հատ
  անհատական տուփեր՝ մշակված COP17-ի բրենդային և ներկայացուցչական պահանջներին համապատասխան, նախատեսված պաշտոնական հանձնման և պրոտոկոլային օգտագործման համար:

- **Բազմաֆունկցիոնալ էջանիշ** 18,600 հատ
  • կրծքանշանի հետ համակցվող կամ առանձին օգտագործվող տարր
  • կիրառվում է որպես բրենդի և COP17-ի բովանդակային ներկայացման միջոց
- **Էկո պայուսակ (Tote bag)** 16500 հատ
  • բրենդային դիզայնով
  • էկոլոգիապես հավաստագրված ներկերով տպագրությամբ
  • նախատեսված բազմակի օգտագործման համար
- **Ջրաման / թերմոս** 16,500 հատ
  • նախատեսված բազմակի օգտագործման համար
  • բրենդային ինտեգրմամբ
- **Բեյջի թել** 19,700 հատ
  ՄԱԿ-ի գործընկերների ուղեցույցին համապատասխան մշակված բեյջի թել՝ անվտանգության պլաստիկ բաժանարարով և «կոկորդիլոս» տեսակի ամրացմամբ:
  Տպագրություն՝ COP17 logo, Yerevan Armenia, MOP12/MOP6, UN Biodiversity Conference, Երեւան Հայաստան

  - *16000* հատ կանաչ
  - *2200* հատ նարնջագույն
  - *1200* հատ դեղին
  - *300* հատ կարմիր

2. **Արտադրական և դիզայներական աշխատանքների մոտեցում**

Բրենդային նվերների մշակումը և արտադրությունը իրականացվում է փուլային և համակարգված մոտեցմամբ՝ ապահովելով որակի, ֆունկցիոնալության և բրենդային համապատասխանության բարձր մակարդակ:

Աշխատանքների հիմքում դրված է շուկայի ուսումնասիրությունը և միջազգային փորձի վերլուծությունը, որի շրջանակում՝

- իրականացվել է համանման միջազգային միջոցառումների բրենդային նյութերի ուսումնասիրություն
- հավաքագրվել և վերլուծվել են նյութերի, ձևաչափերի և արտադրական լուծումների նմուշներ
- գնահատվել են տարբեր արտադրական տարբերակների որակը, կիրառելիությունը

Դիզայներական և արտադրական լուծումները մշակվել են՝
• COP17 բրենդային համակարգին և վիզուալ լեզվին համապատասխան
• տարբեր նյութերի և տեխնոլոգիաների համադրման միջոցով
• հաշվի առնելով արտադրության ծավալը և գործառնական կիրառման պայմանները

Մշակման գործընթացում ապահովվում է համագործակցություն բոլոր ներգրավված կողմերի հետ՝
• առաջարկվող նմուշների և տարբերակների քննարկում
• բովանդակային և վիզուալ համապատասխանության համաձայնեցում
• վերջնական տարբերակների հաստատում արտադրությունից առաջ

Իրականացվել է նաև փորձնական նմուշների պատրաստում և գնահատում՝
• արտադրության որակի ստուգման նպատակով
• նյութերի և տպագրական լուծումների համապատասխանության ապահովման համար
• ֆունկցիոնալության և օգտագործման հարմարավետության գնահատման համար

3. Նախագծի կազմակերպում և կառավարում

Նախագծի արդյունավետ և համակարգված իրականացման նպատակով կիրառվում է կենտրոնացված կառավարման մոդել, որի շրջանակում ապահովվում է բրենդային նվերների մշակման և արտադրության ամբողջական գործընթացի համակարգումը՝ գաղափարական մշակումից մինչև վերջնական արտադրանքի մատակարարում:

Ծառայությունը ներառում է՝

❖ **Նախագծի ընդհանուր կառավարում**
• նախագծի փուլային պլանավորում և ժամանակացույցի մշակում
• արտադրական գործընթացների և մատակարարումների համակարգում
• ներգրավված թիմերի և ենթակապալառուների աշխատանքի կազմակերպում
• որոշումների կայացման և հաստատման գործընթացների ապահովում

❖ **Ստեղծագործական և դիզայներական համակարգում**
• բրենդային նվերների դիզայնի մշակում և վերահսկում
• վիզուալ համապատասխանության ապահովում COP17 բրենդային համակարգին
• տարբեր արտադրական տարբերակների և նմուշների գնահատում և ընտրություն

❖ **Արտադրական և մատակարարման գործընթացների համակարգում**
• արտադրական գործընթացների պլանավորում և փուլերի կազմակերպում՝ ըստ հաստատված դիզայնի և քանակների
• արտադրողների ընտրություն և համագործակցության կազմակերպում՝ ըստ արտադրանքի տեսակների
• ներմուծման գործընթացների կազմակերպում և ուղեկցում (մատակարարում, մաքսային գործընթացներ, տեղափոխում)
• արտադրության ընթացքում որակի վերահսկում և միջանկյալ ստուգումներ
• պատրաստի արտադրանքի ընդունում, ստուգում և համապատասխանության ապահովում հաստատված նմուշներին
• փաթեթավորման, պահեստավորման և բաշխման գործընթացների կազմակերպում

4. Ներգրավվող մասնագետներ

Նախագծի իրականացման համար նախատեսվում է բազմապրոֆիլ մասնագիտական թիմի ներգրավում՝ ներառելով ինչպես հիմնական թիմի անդամներին, այնպես էլ ենթակապալառու կազմակերպությունների մասնագետներին՝ ապահովելով նախագծի ամբողջական իրականացում՝ գաղափարից մինչև գործառնական շահագործում:

<u>Կառավարման և համակարգման թիմ</u>
• Ծրագրի ղեկավար
• Մատակարարման և լոգիստիկայի համակարգողներ

<u>Ստեղծագործական և դիզայներական թիմ</u>
• Ստեղծագործական տնօրեն
• Արտ տնօրեն
• Գրաֆիկական դիզայներներ

<u>Արտադրական թիմ և մատակարարներ</u>
• արտադրության պատասխանատուներ
• տեքստիլ արտադրության մասնագետներ
• տպագրական արտադրության մասնագետներ

<u>Գործառնական և լոգիստիկ աջակցություն</u>

- փաթեթավորման և բաշխման թիմ
- պահեստավորման և տեղափոխման մասնագետներ

Նախնական գնահատմամբ նախագծի տարբեր փուլերում կարող է ներգրավվել մինչև 30 մասնագետ (այդ թվում՝ ենթակապալառուների միջոցով) ՝ կախված հաստատված հայեցակարգի մասշտաբից, տեխնիկական լուծումներից և գործառնական պահանջներից:

Հավելվածի ֆինանսական գնահատական

COP17 բրենդային նվերների մշակում և արտադրություն իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 289,544,440 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր և պարտադիր այլ վճարներ): ՇՄ նախարարության և Կատարողի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման վերաբաշխումներ, որը չի կարող գերազանցել Կառավարության որոշմամբ հատկացված գումարը:

Հավելված №3
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №2
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ԴՈՊԻՆԳ ՍՓԵՅՍ ՍՊԸ
տնօրեն
Հայկ Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

COP17 բրենդային նվերների մշակման և արտադրության ծառայությունների մատուցման (ձեռքբերման)

h/h	Ապրանքի անվանումը (ներառյալ ապրանքանիշը)	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	Ընդհանուր գումարը, ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
1	Կրծքանշան (Pin), գունավոր հավելված 2-ում քանակներով և բնութագրիչներին համապատասխան	հատ	17000	2340	39 780 000
2	Կրծքանշան (Pin), կապույտ եւ կարմիր գույներով հավելված 2-ում քանակներով և բնութագրիչներին համապատասխան	հատ	1100	2652	2 917 200
3	Կրծքանշան (Pin), ոսկեգույն մետաղական հավելված 2-ում քանակներով և բնութագրիչներին համապատասխան	հատ	450	2964	1 333 800
4	Բեյջի թել, հավելված 2-ում նշված գունային քանակներով և բնութագրիչներին համապասխան	հատ	19 700	1248	24 585 600
5	Ջրաման / թերմոս, հավելված 2-ում բնութագրիչներին համապասխան	հատ	16 500	7800	128 700 000
6	Էկո պայուսակ (Tote bag), հավելված 2-ում բնութագրիչներին համապասխան	հատ	16 500	3432	56 628 000
7	Հատուկ փաթեթավորում	հատ	400	24 960	9 984 000
8	**Բազմաֆունկցիոնալ էջանիշ**	հատ	18600	358.8	6 673 680
9	Չնախատեսված ծախսեր 7%	7 %	7 %		18 942 160
	Ընդամենը՝				**289 544 440**